



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ N 0004/02/10թ.
Նախագահող դատավոր՝ Գ.Արզումանյան
Հ.Խաչատրյան
Ն.Գրիգորյան

Քաղաքացիական գործ N 0004/02/10թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

23-ին փետրվարի 2012թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

Նախագահությամբ՝ դատավոր	Ի.Կարապետյանի
Դատավորներ՝	Գ.Գրիգորյանի
	Կ.Ղարայանի

Դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի Վիոլետա Թամրազյանի և Էլզա Հակոբյանի ընդդեմ Միքայել Թամրազյանի և ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման՝ Ստեփանակերտ քաղաքի Վ. Սարոյան փողոցի թիվ 25 տան նկատմամբ Միքայել Թամրազյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և տնամերձ հողամասի նկատմամբ Վիոլետա Թամրազյանի սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ հակընդդեմ հայցի Միքայել Թամրազյանի ընդդեմ Վիոլետա Թամրազյանի և Էլզա Հակոբյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով Վ. Սարոյան փողոցի թիվ 25 տան 70.3մ² մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և ըստ հայցի Կարինե Թամրազյանի ընդդեմ Միքայել Թամրազյանի և ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-9 մատյանի 011750 համարի տակ կատարված Միքայել Թամրազյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու ու Վ. Սարոյան փողոցի թիվ 25 տան և տնամերձ հողամասի 1/2 մասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. դեկտեմբերի 20-ի որոշման դեմ պատասխանող Միքայել Թամրազյանի ներկայացուցիչ Անահիտ Միքայելի Թամրազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց`

1. Գործի դատավարական նախապատմությունը.

2008թ. օգոստոսի 12-ին դիմելով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ Մ.Թամրազյանի և ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման /այսուհետ նան՝ Կադաստր/, հայցվորներ Վ.Թամրազյանը և Է.Հակոբյանը խնդրել են անվավեր ճանաչել ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարոյան փողոցի թիվ 25 տան նկատմամբ Մ.Թամրազյանի սեփականության իրավունքի գրանցումը և ճանաչել Վ.Թամրազյանի սեփականության իրավունքը վերը նշված տան տնամերձ՝ 297,28 քառ. մետր հողամասի նկատմամբ:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2008թ. սեպտեմբերի 8-ի վճռով հայցը բավարարել է. անվավեր է ճանաչել Կադաստրի կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-9 մատյանում 011750 համարի տակ 60 քառ. մետր մակերեսով հողամասի մի մասի՝ Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարոյան փողոցի թիվ 25 բնակելի տան չգրադեցրած 24 քառ. մետր մակերեսով հողամասի նկատմամբ Մ.Թամրազյանի սեփականության իրավունքի գրանցումը: Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարոյան փողոցի թիվ 25 բնակելի տան գրադեցրած և կից 297,28 քառ. մետր մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել է Վ.Սարգսյանի սեփականության իրավունքը:

Նշված վճռի դեմ 2009թ. հոկտեմբերի 7-ին Մ.Թամրազյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2009թ. հոկտեմբերի 11-ի որոշմամբ վերադարձվել է:

ԼՂՀ Գերագույն դատարանը 2009թ. նոյեմբերի 2-ի որոշմամբ վերացրել է ԼՂՀ վերաքննիչ դատարանի նշված որոշումը և գործն ուղարկել նույն դատարան:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը 2009թ. դեկտեմբերի 8-ի որոշմամբ բեկանել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008թ. սեպտեմբերի 8-ի դատական ակտը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2010թ. մարտի 10-ի վճռով հայցը բավարարել է մասնակիորեն. անվավեր է ճանաչել Կադաստրի կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-9 մատյանում 011750 համարի տակ Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարոյան փողոցի թիվ 25 բնակելի տան 0.0060 հա հողատարածքի մի մասի՝ շինությամբ գրադեցված 24 քառ. մետր մակերեսով հողամասի նկատմամբ Մ.Թամրազյանի սեփականության իրավունքի գրանցումը: Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարոյան փողոցի թիվ 25 բնակելի տան 148.64 քառ. մետր մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ ճանաչել է Վ.Սարգսյանի սեփականության իրավունքը: Պատասխանող Մ.Թամրազյանի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով գործը, ԼՂՀ վերաքննիչ դատարանը 2010թ. մայիսի 6-ի որոշմամբ բեկանել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. մարտի 11-ի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

Մ.Թամրազյանը 2010թ. հունիսի 23-ին ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան հակընդդեմ հայց է ներկայացրել, խնդրելով ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարոյան փողոցի թիվ 25 բնակելի տան 70.3 քառ. մետր մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:

Կ.Թամրազյանը 2010թ. հուլիսի 23-ին ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան է ներկայացրել հայցային դիմում, խնդրելով անվավեր ճանաչել Կադաստրի կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-9 մատյանում 011750 համարի տակ կատարված Մ.Թամրազյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը և ճանաչել իր սեփականության իրավունքը Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարոյան փողոցի թիվ 25 բնակելի տան և տնամերձ հողամասի մասի նկատմամբ:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը 2011թ. մայիսի 18-ի վճռով որոշել է. Վ.Թամրազյանի և Է.Հակոբյանի հայցն ընդդեմ Մ.Թամրազյանի՝ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին՝ մերժել: Վ.Թամրազյանի հայցը՝ հողամասի 1/2 մասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, բավարարել, ճանաչել է Վ.Թամրազյանի սեփականության իրավունքը 1/2 մասով Ռ.Հովհաննիսյանի մահից հետո իրեն ժառանգություն անցած Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարոյան փողոցի թիվ 25 հասցեով հողամասի նկատմամբ: Կ.Թամրազյանի հայցը բավարարել է մասնակիորեն. ճանաչել է Կ.Թամրազյանի սեփականության իրավունքը 1/2 մասով Ռ.Հովհաննիսյանի մահից հետո իրեն ժառանգություն անցած Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարոյան փողոցի թիվ 25 հասցեով բնակելի տան և հողամասի նկատմամբ: Կ.Թամրազյանի հայցը՝ Մ.Թամրազյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել է: Քաղաքացիական գործի վարույթն ըստ Մ.Թամրազյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Վ.Թամրազյանի և Է.Հակոբյանի՝ 70.3 քառ.մետր մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, կարճել է:

Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել հայցվորներ Վ.Թամրազյանի և Կ.Թամրազյանի ներկայացուցիչ Լ.Շեկյանը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. հուլիսի 25-ի որոշմամբ՝ գործի վարույթը կասեցվել է՝ մինչև սույն գործին առնչվող, ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի /վարչական/ դատարանի վարույթում գտնվող թիվ 0101/05/2011թ. վարչական գործով վեճն ըստ էության լուծող վերջնական դատական ակտ կայացնելը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. դեկտեմբերի 6-ի որոշմամբ՝ քաղաքացիական գործի վարույթը վերսկսվել և գործը նշանակվել է դատաքննության:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը 2011թ. դեկտեմբերի 20-ի որոշմամբ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2011թ. մայիսի 18-ի վճիռը մասնակիորեն բեկանել և փոփոխել է. անվավեր է ճանաչել 2006թ. հոկտեմբերի 2-ին Կադաստրի կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-9 մատյանի 011750 համարի տակ Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարոյան փողոցի թիվ 25 բնակելի տան 0.0060 հա հողատարածքի մի մասի՝ շինությամբ չգրադեցված 24 քառ. մետր մակերեսով հողամասի նկատմամբ Մ.Թամրազյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Վճռի մնացած մասը թողել է անփոփոխ:

Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պատասխանող, հակընդդեմ հայցվոր Մ.Թամրազյանի ներկայացուցիչ Ա.Թամրազյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձը գտնում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է և ենթակա է բեկանման, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը, այն է՝ ճիշտ չի գնահատել գործով առկա ապացույցները և հանգել է սխալ հետևության, բեկանելով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի 2011թ. մայիսի 18-ի վճիռը, որը, բողոք բերողի կարծիքով, օրինական է և հիմնավոր:

Նշված պնդումը բողոք բերողը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Ստորադաս դատարաններում դատաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցներով հիմնավորվել է, որ Մ.Թամրազյանի սեփականության իրավունքը շինությամբ չձանրաբեռնված վիճելի 24 քառ. մետր հողամասի նկատմամբ գրանցվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ԼՂՀ օրենքի 21-րդ հոդվածի պահանջներին համապատասխան: Ըստ բողոք բերողի՝ դատաքննությամբ հիմնավորվել է, որ ինքն իր որդու՝ Մհեր Պողոսյանի հետ իրենց՝ սեփականության իրավունքով պատկանող, Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարոյան փողոցի թիվ 25 հասցեով անշարժ գույքը, որը բաղկացած է 127.99 քառ. մետր մակերեսով բնակելի տնից և 0.0060 հա հողամասից, 2006թ. օգոստոսի 29-ին նվիրել են Մ.Թամրազյանին: Նշված պայմանագրի հիման վրա կատարվել է Մ.Թամրազյանի սեփականության իրավունքի գրանցումը շինությամբ չձանրաբեռնված 24 քառ. մետր հողամասի նկատմամբ:

Բողոք բերողը պնդում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանն անուշադրության է մատնել այն հանգամանքը, որ սույն գործով առկա է օրինական ուժի մեջ մտած ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի /վարչական/ դատարանի 2011թ. սեպտեմբերի 28-ի վճիռը, որով մերժվել է Վ. և Կ. Թամրազյանների հայցն ընդդեմ Կադաստրի, Ա.Թամրազյանի, Մ.Պողոսյանի և Մ.Թամրազյանի՝ Կադաստրի կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-9 մատյանի 011750 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն առաջին ճանաչելու պահանջի մասին:

Բողոք բերողը գտնում է նաև, որ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրվել էական դատական սխալ, որով խախտվել է իր սեփականության իրավունքը, և իր համար առաջացրել ծանր հետևանքներ, և որ բարձրացրած հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Խնդրում է բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. դեկտեմբերի 20-ի որոշումը և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011թ. մայիսի 18-ի վճիռին:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1/ Ժողովրդական դեպուտատների Ստեփանակերտի քաղաքային խորհրդի գործկումի 1959թ. ապրիլի 17-ի թիվ 94 որոշմամբ հայր ու որդի՝ Ներսես ու Սարգիս Թամրազյաններին Ստեփանակերտ քաղաքի Ձերժինսկու /ներկայումս՝ Սարոյան/ փողոցի թիվ 19 տեղամասում հատկացվել է 328-ական քառ. մետր հողամաս՝ անձնական սեփականության իրավունքով բնակելի տներ կառուցելու համար:

2/ Ժողովրդական դեպուտատների Ստեփանակերտի քաղաքային խորհրդի գործկումի 1987թ. սեպտեմբերի 29-ի թիվ 20/416 որոշմամբ սահմանվել է՝ բավարարել Ստեփանակերտ քաղաքի Ձերժինսկու /ներկայումս՝ Սարոյան/ փողոցի թիվ 25 տան բնակիչ Մ.Թամրազյանի խնդրանքը և նրա կողմից 1960թ. եղբոր՝ Մ.Թամրազյանի և հոր՝ Ն.Թամրազյանի հողամասում 36 քառ. մետր հողատարածքի վրա կառուցված երկհարկանի բնակելի տունը՝ 40 քառ. մետր բնակելի մակերեսով և 77.45 քառ. մետր օգտակար տարածությամբ /առանց լրացուցիչ հողամասի/, օրինականացնել և տալ գրանցման վկայագիր:

3/ Նշված որոշման հիման վրա ԼՂԻՄ տեխնիկական գույքագրման բյուրոյում գրանցվել է Մ.Թամրազյանի անձնական սեփականության իրավունքը Ստեփանակերտ քաղաքի

Ձերժինսկու /ներկայումս՝ Սարոյան/ փողոցի թիվ 25 տան նկատմամբ և հողամասի մակերեսը նշվել է 36 քառ. մետր:

4/ ԼՂՀ առաջին ատյանի դատարանը 2000թ. նոյեմբերի 11-ի վճռով Վ. և Կ. Թամրազյաններին ճանաչել է Ռոզա Հովհաննիսյանի մահից հետո ժառանգությունն ընդունած ժառանգներ:

5/ Ա.Թամրազյանն և իր որդի՝ Մ.Պողոսյանը, 2006թ. օգոստոսի 29-ին Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարոյան փողոցի թիվ 25 հասցեում գտնվող անշարժ գույքը նվիրել են Մ.Թամրազյանին, որը գրանցել է իր սեփականության իրավունքը՝ պայմանագրում նշված գույքի նկատմամբ:

6/ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի /վարչական/ դատարանը 2011թ. սեպտեմբերի 28-ի վճռով մերժել է Վ.Թամրազյանի և Կ.Թամրազյանի հայցն ընդդեմ Կադաստրի, Ա.Թամրազյանի, Մ.Պողոսյանի և Մ.Թամրազյանի՝ Կադաստրի կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-9 մատյանի 011750 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն առաջին ճանաչելու պահանջի մասին: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով սույն վճռաբեկ բողոքը՝ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, իսկ քննարկվող դատական ակտը՝ բեկանման, հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն վճռաբեկ բողոքը բերվել է դատավարական իրավունքի խախտման հիմքերով, ուստի Գերագույն դատարանի առջև բարձրացված է հետևյալ իրավական խնդիրը՝ առկա է, արդյոք, վերանայվող դատական ակտում դատավարական օրենքի այնպիսի խախտում, որը հիմք է հանդիսանում վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նշված հոդվածների մեկնաբանությունից ուղղակիորեն հետևում է, որ Գերագույն դատարանը՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունների շրջանակներում, բեկանում է վերանայվող դատական ակտը և բավարարում վճռաբեկ բողոքն այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքում նշված փաստարկներն էական են գործի ըստ էության ճիշտ լուծման համար, և երբ վերանայվող դատական ակտն անհիմն և անօրինական է, և կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներով, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծմանը:

Սույն գործի նյութերից հետևում է, որ Ա.Թամրազյանը և Մ.Պողոսյանը, սեփականության իրավունքով իրենց պատկանող Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարոյան փողոցի թիվ 25 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ բաղկացած 127.99 քառ. մետր մակերեսով շինությունից և 0.0060 հա մակերեսով հողամասից, 2006թ. օգոստոսի 29-ին կնքված նվիրատվության պայմանագրով նվիրել են Մ.Թամրազյանին: Նշված պայմանագրի հիման վրա Կադաստրում իրականացվել է Մ.Թամրազյանի սեփականության իրավունքի գրանցումը, համաձայն «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ԼՂՀ օրենքի՝ պահպանելով նվիրատվության պայմանագրում նշված գույքի մակերեսը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի հանաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող սուբյեկտները, պետական գրանցման նպատակով, անշարժ գույքի պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումին դիմումի հետ միասին ներկայացնում են նույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը:

Մինչդեռ ԼՂՀ վերաքննիչ դատարանը գտել է, որ Մ.Թամրազյանի սեփականության իրավունքը գրանցվել է առանց որևէ օրինական հիմքի, հիմք ընդունելով ժողովրդական դեպուտատների Ստեփանակերտի քաղաքային սովետի գործկոմի 1987թ. սեպտեմբերի 29-ի թիվ 20/416 որոշումը: ԼՂՀ վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Մ.Թամրազյանի իրավունքի գրանցման հիմք է հանդիսացել նվիրատվության պայմանագիրը, և գրանցումն իրականացվել է դրանում նշված մակերեսների պահպանմամբ:

Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանի այդ հետևությունները հանգեցրել են գործի ըստ էության սխալ լուծման:

Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ գործում առկա է ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. հուլիսի 25-ի որոշումը՝ գործի վարույթը կասեցնելու մասին, որում նշված է, որ անհնարին է վերաքննիչ դատարանի վարույթում գտնվող թիվ 0004/02/10թ. քաղաքացիական գործի քննությունը՝ մինչև Վ.Թամրազյանի և Կ.Թամրազյանի կողմից ներկայացված հայցի՝ ընդդեմ Կադաստրի, Ա.Թամրազյանի, Մ.Պողոսյանի և Մ.Թամրազյանի՝ Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-9 մատյանի 011750 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն առաջին ճանաչելու պահանջի մասին վարչական գործով վեճն ըստ էության լուծող վերջնական դատական ակտ կայացնելը:

Գերագույն դատարանը փաստում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանն անտեսել է և իրավական գնահատման չի արժանացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստի /վարչական/ դատարանի օրինական ուժի մեջ մտած 2011թ. սեպտեմբերի 28-ի վճիռը, որով մերժվել է Վ.Թամրազյանի և Կ.Թամրազյանի հայցն ընդդեմ Կադաստրի, Ա.Թամրազյանի, Մ.Պողոսյանի և Մ.Թամրազյանի՝ Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-9 մատյանի 011750 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն առաջին ճանաչելու պահանջի մասին:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի ուժով ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի առաջին մասի վեցերորդ կետով սահմանված՝ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Գերագույն դատարանի լիազորությունը հետևյալ հիմնվորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք... ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Գերագույն դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոնշյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Գերագույն դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի վեցերորդ կետով, 256-րդ հոդվածով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանող, հակընդդեմ հայցվոր Միքայել Ներսեսի Թամրազյանի ներկայացուցիչ Անահիտ Միքայելի Թամրազյանի վճռաբեկ բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. դեկտեմբերի 20-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011թ. մայիսի 18-ի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

**Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կ.ՂԱՐԱՅԱՆ**